ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/27-1

ք.Երևան «23» «05» 2018թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Հ.Հովհաննիսյանի, որը գործում նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին կամ մատուցել է անպատշաճ որակի ծառայություն,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված Ծառայության մատուցումը սկսել Պատվիրատուի բանավոր կամ գրավոր հանձնարարությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում, եթե Կատարողի բանավոր կամ գրավոր առաջարկությամբ և Պատվիրատուի բանավոր կամ գրավոր համաձայնությամբ այլ ժամկետներ չեն սահմանվել:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Եթե կատարողը ծառայությունների մատուցելիս խոտանել է իրեն հանձնված գույքը, ապա պարտավոր է իր հաշվին վերականգնել այն: Ընդ որում, խոտանված գույքի վերականգնման համար գործում է սույն պայմանագրի 2.1.2 և 2.4.1 կետերով սահմանված դրույթները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված №2): Ընդ որում Կատարողը հանձնման -ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2. Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3. Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3000 000 (երեք միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված №2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի Հավելվածներ №№ 1-ը; 2-ը և 2.1-ը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Մյասնիկյան 22/4
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018679	ՀՀ 220083335012000
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 08417829
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի տնօրեն
Հ.Հովհաննիսյան	***Վ.Բաղդասարյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
«23» «05» 2018թ. կնքված
«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/27-1» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ընտանեպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
տնօրեն
Վ.Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայությունների անվանումները	Չափման միավորը	Ընդհանուր գինը	Ընդհանուր քանակը
1	50111130	ԱՊՀ արտադրության ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և վերանորոգում	դրամ	**3000 000**	1
Ընդհանուր ծառայության մատուցման սկիզբը՝			Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը		
Ընդհանուր ծառայության մատուցման ավարտը՝			« 15 » « դեկտեմբերի » 2018թ.		
Փոխարինվող մասերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է:					

*Ծառայությունների մատուցումը ըստ գնացուցակի:

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Հ/հ	Ծառայության անվանումը	Միավորի գները
	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	
1	Բռնկման համակարգի ստուգում	10
2	Կցորդման համակարգի ստուգում	10
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	10
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	10
5	Արգելակման համակարգի աշխատանքի ստուգում	10
6	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	10
	1.Շարժիչ	
7	Շարժիչի հանում և տեղադրում	10000
8	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	10000
9	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	35000
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	15000
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	10
12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով	8000
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	10
14	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	10
15	Փականների խցուկների փոխարինում	5000
16	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում	2000
17	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	12000
18	Ծնկաձև լիսեռի հղկում	8000
19	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	1000
20	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում	5000
21	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	10
22	Ծնկաձև լիսեռի ուղղում	10
23	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	3000
24	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	2000
25	Շարժիչի բլոկի փոխարինում	10
26	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	10
27	Մխոցի փոխարինում 1 հատ	500
28	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000
29	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
30	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	10
31	Փականիվի փոխարինում	10
32	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	10
33	Շարժիչի շղթայի փոխարինում	5000
34	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	2000
35	Շարժիչի քարտերի փոխարինում,	2000
36	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	1000
37	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	2000
38	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	1000
39	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	10
40	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	10
41	Շարժիչի յուղի ռադիատորի փողրակի փոխարինում	10
42	Յուղի ծորակի փոխարինում	10
43	Օդաքաշակ փողրակի փոխարինում	500
44	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
45	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	1000
46	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
47	Թափանիվի առանցքակալի փոխարինում	1000
48	Շարժիչի կափույրի փոխարինում	10
49	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	10
50	Շարժիչի շարժաթևի փոխարինում	1000
51	Մխոցային օղակների փոխարինում	4000
52	Ատամնանիվի փոխարինում	10
53	Ատամնանիվի փոկի փոխարինում	10
54	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	10
55	Սուխարիկ փոխարինում	10
56	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	1000
57	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	10
58	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	10
59	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	2000
60	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	10
61	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	10
62	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	10
63	Շարժիչի գամասեղի փոխարինում	10
64	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	10
65	Գլխիկի հեղույսի փոխարինում	10
66	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	10
67	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	1000
68	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	2000
69	Շարժիչի քիմիական լվացում	4500
70	Բաշխիչ լիսեռի նորոգում /վռանի տեղադրում/	10
71	Ծնկաձև լիսեռի կարգավորող տափողակի տեղի նորոգում	10
72	Կափյուրների հղկում	10
73	Կափյուրի բնիկի նորոգում /գնեզդո/	2000
74	Պարազիտ լիսեռի հղկում և վռանի տեղադրում	2000
75	Շրջանակի ուղղում,նորոգում	10
76	Զսպանի թերթիկի փոխարինում	10
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
77	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1100
78	Ավտոմեքենայի յուղում	1000
79	Համակարգչային ախտորոշում	2000
80	Յուղի ռադիատորի փոխարինում	10
81	Յուղի ռադիատորի նորոգում	10
82	Վառոցքի մոմի փոխարինում	1500
83	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	10
84	Օդի զտիչի փոխարինում	500
85	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
86	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
87	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	10
88	Կարբյուրատորի փոխարինում կամ հանում տեղադում	1500
89	Կարբյուրատորի վերանորոգում	10
90	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	1000
91	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	6000
92	Բոցամուղի կոդավորում	10
93	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	500
94	Բենզամղիչի փոխարինում	2500
95	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	1000
96	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000

97	Բռնկման կարգավորում	1000
98	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
99	Ղեկավարման բլոկի վերանորոգում	3000
100	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
101	Վառելիքի բաքի մաքրում	10
102	Օդի ծախսի տվիչի փոխարինում	10
103	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	500
104	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	1000
105	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	10
106	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	10
107	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	500
108	Տվիչի փոխարինում	10
109	Ակսիլատորի փոխարինում կամ նորոգում	2000
110	Օդազտիչի իրանի փոխարինում	10
111	Պացոսի ճոպանի փոխարինում կամ նորոգ.	10
	3. Սառեցման և արտածման համակարգ	
112	Հովհարի փոխարինում	2000
113	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
114	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
115	Ռադիատորի նորոգում	10
116	Շերտափեղկի փոխարինում	10
117	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	10
118	Ընդարձակող բաքի փոխարինում	500
119	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	500
120	Ջրի ծորակի փոխարինում	500
121	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	1000
122	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
123	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	5000
124	Վառարանի ռադիատորի նորոգում	10
125	Վառարանի շարժիչի փոխարինում	3000
126	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	10
127	Ջեռուցիչի իրանի փոխարինում	10
128	Թերմոստատի փոխարինում	3000
129	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	4000
130	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	10
131	Գեներատորի փոկի փոխարինում	1000
132	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	10
133	Ջրի ռադիատորի վերանորոգում	10
134	Թերմոստատի միջադիրի փոխարինում	10
135	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
136	Խլարարի խողովակի փոխարինում	10
137	Խլարարի անուրի (хамут) փոխարինում	10
138	Խլարարի ներդիրի փոխարինում	500
139	Խլարարի կախոցի փոխարինում	500
140	Հովացման հեղուկի փոխարինում	2000
141	Դիֆուզորի փոխարինում	10
	4. Կցորդում և ՓՏ	
142	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
143	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	10
144	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	8000
145	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10

146	Կցորդման ոտնակի կարգավորում	10
147	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
148	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	800
149	Կցորդման երկժանիի փոխարինում	1000
150	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	15000
151	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	2000
152	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	1000
153	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	1000
154	ՓՏ-ի հանում և տեղադրում	7000
155	ՓՏ-ի քանդում,արատավորում, հավաքում	5000
156	ՓՏ-ի պատյանի փոխարինում	2000
157	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	2000
158	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	2000
159	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	2000
160	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	2000
161	ՓՏ-ի առաջնային լիսեռի առանցքակալի փոխարինում	2000
162	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	2000
163	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	1500
164	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	1000
165	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	1000
166	ՓՏ-ի յուղի փոխարինում	1000
167	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	10
168	Փոխարկման մեխանիզմի կապրոնների փոխարինում	10
169	Կցորդման եղանի փոշեթիկնոցի փոխար.	10
170	Կցորդման կարգավորում	10
171	Կցորդման ոտնակի կարգավորիչ տափողակների փոխարինում	10
172	Կցորդման գլխավոր գլանի հեղուկի տարայի փոխարինում	10
173	Փոխանցումը կարգավորող ձողի փոխար.	10
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
174	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	1000
175	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
176	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում,հավաքում	3000
177	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	10
178	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	10
179	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	1000
180	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	10
181	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	1000
182	Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում	1000
183	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	1000
184	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	1000
185	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	1500
186	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
187	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	1000
188	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	10
189	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
190	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
191	Կարդանի հեղույսի փոխարինում	10
192	ԲՏ-ի ելուստի փոխարինում /ֆլանեց/	10
193	ԲՏ-ի արգելակման թմբուկի փոխարինում	10
194	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների փոխարինում	10
195	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների կարգավորում	10
196	ԲՏ-ի արգելակման աշխատանքային գլանի փոխարինում	10

	6. Առջևի և հետևի կամրջակներ	
197	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000
198	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	3000
199	Առջևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
200	Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	1000
201	Կամրջակի յուղի փոխարինում	500
202	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
203	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	10
204	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000
205	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	1000
206	Հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
207	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում	2000
208	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	1000
209	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	10
210	Առջևի կիսասռնիները միացնող ագույցի փոխարինում	10
211	Առջևի կամրջակի շրջադարձի բռունցքի փոխարինում	10
212	Առջևի կամրջակի շրջադարձի գնդաձև հենակի փոխարինում	10
213	Տանող կցաշուրթի փոխարինում	10
214	Սատելիտների հավաքման իրանի և սռնիի փոխարինում	10
	7. Կախոց	
214	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
215	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
216	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	3000
217	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
218	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
219	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	10
220	Անվակունդի գամասեղի և հեղյուսի փոխարինում(մեկ անիվի համար)	500
221	Ձախ կամ աջ հոդակապի խտաբուկերի փոխարինում	1000
222	Ձախ կամ աջ հոդակապի նորոգում	10
223	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոցի փոխարինում	2000
224	Շկվորնու փոխարինում	10
225	Ռեզբավոյի փոխարինում	10
226	Ճոճանակային լծակի վռանի փոխարինում	2000
227	Ճոճանակային լծակի փոխարինում	2000
228	Ճոճանակային լծակի կալունակի փոխարինում	10
229	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	10
230	Առջևի զսպանակի փոխարինում	10
231	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1500
232	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	500
233	Մեղմիչի ամրացման կալունակի փոխարինում	10
234	Մեղմիչի երկաթե համածուլվածքով վռանի փոխարինում	1000
235	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3500
236	Ներքևի լծակի վռանների փոխարինում	2000
237	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	10
238	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	10
239	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
240	Վերևի լծակի վռանների փոխարինում	2000
241	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	10
242	Գնդե հոդակապերի պատյանի փոխարինում	10
243	Գնդե հոդակապի փոխարինում	1500
244	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000
245	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	2000
246	Հետևի կայունարարի վռաների փոխարինում	10
247	Կայունարարի կալունակի փոխարինում	10
248	Հետևի զսպանակների փոխարինում	1000
249	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
250	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10
251	Զսպանի փոխարինում	10
252	Զսպանի վռանների փոխարինում	10
253	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	1500
254	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	1000
255	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	10
256	Զսպակի մետաղական վռանների փոխարինում	10
257	Ստրումյանկի փոխարինում	10
258	Զսպանի ականջոցի փոխարինում	10
259	Զսպանի ականջոցի հեղույսի փոխարինում	10
260	Զսպանակի մեկուսացնող ռետինե միջադիրի փոխարինում	0
261	Անվակունդի առանցքակալների բացակի կարգավորում	500
	8. Ղեկային մեխանիզմ	
262	Ղեկայունակի հիմնական նորոգում,	10
263	Ղեկայունակի արորիկի փոխարինում	10
264	Ղեկայունակի առանցքային սռնու փոխարինում	10
265	Ղեկայունակի խաչուկների փոխարինում	1000
266	Ղեկայունակի վերանորոգման հավաքածույի փոխարինում	1000
267	Ղեկայունակի քանդում, արատավորում, հավաքում	1000
268	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	1000
269	Ղեկայունակի պատյանի փոխարինում	10
270	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	10
271	Ղեկային մեխանիզմի ղեկայունակի ամրացման անուրի փոխարինում	10
272	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	1000
273	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	1000
274	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	1500
275	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	10
276	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	1500
277	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	10
